

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°10.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի
01-ը փետրվարի 2014թ.

Նախագահ՝ Ա. Յուզուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի դասացուցակների հաստատում:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

2. II կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքներ:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

3. Գերազանց և ակտիվ ուսանողների կրթական խրախուսում:

Գիտական զեկուցումների և ֆակուլտատիվ խմբերի աշխատանքների քննարկում:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան,
խորհրդի նախագահ Ա. Վ. Յուզուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի
քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Յուզուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի
նախագահ Ա. Վ. Յուզուլյանը: Նա ներկայացրեց ըստ ուսումնական պլանի
կազմված 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի դասացուցակները: Դասացուցակը
կազմվել է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության I,
«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության II և IV,
«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության IV կուրսերի համար՝
երկշաբաթյա /համարիչ և հայտարար/գրաֆիկով:

Զեկուցողը նշեց նաև, որ մասնագետ դասախոսների պահանջ չկա, բոլոր պահանջները բավարար են ուսումնական պարապմունքները սկսելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Է. Կ. Օսիպովան: Նրանք համակարծիք էին քննարկված և կազմված դասացուցակին և առաջարկեցին ներկայացնել տնօրենություն հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրինություն հաստատելու 2013-14թթ. ուս.տարվա II կիսամյակի դասացուցակը՝ ըստ մասանգիտությունների:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքների մասին. ֆակուլտետում պահպանել կարգապահությունը, ուսումնական պարապմունքերը իրականացնել ըստ հաստատված դասացուցակի, ուսանողների, դասախոսների և աշխատակիցների կողմից անհրաժեշտ է շարունակել պատշաճ վերաբերմունք յուրաքանչյուրի կողմից իր պարտականությունների կատարման գործում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հանձնարարել դեկանատին վերահսկել նշված աշխատանքների իրականացումը:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը: Նա ներկայացրեց, որ շարունակական է լինելու ֆակուլտետում իրականացվող ֆակուլտատիվ խմբերի պարապմունքները, գիտական զեկուցումների և ընթերցումների կազմակերպումը և անցկացումը: Նա հանձնարարեց ամբիոններին և դասավանդող դասախոսներին ավելի ակտիվացնել ուսանողների մասնակցությունը նշված գործընթացում:

Այնուհետև զեկուցողը անդրադարձավ գերազանց և ակտիվ ուսանողների կրթական խրախուսումների նախաձեռնողական աշխատանքներին. այդ ուղղությամբ տվեց ընդհանուր հանձնարարական, որ անհրաժեշտ է գերազանց և ակտիվ ուսանողներին ընդգրկել գիտական աշխատանքներում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Ա. Զ. Ալավերդյանը: Նրանք նշեցին, որ ըստ մասնագիտությունների ուսանողներից ընդգրկված են գիտական ընթերցումների, զեկուցումների կազմակերպման, անցկացման և այլ աշխատանքերում: Հատկանշական է, որ ուսանողների շրջանում ցանկացողների թիվը ավելանում է:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հանձնարարել ամբիոններին շարունակել և ավելացնել գերազանց և ակտիվ ուսանողների շրջանում կրթական խրախուսումների նախաձեռնողական աշխատանքները:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին արդյունքների մասին ներկայացնել հաջորդ նիստերի քննարկմանը:

ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ